

Անհրաժեշտ է խոշորացույցի տակ վերցնել աճուրդի բոլոր փուլերը. նախարար Սուրեն Պապիկյան

13.03.2019



ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանն այսօր երկշաբաթյա պարբերականությամբ հերթական աշխատանքային խորհրդակցությունն է անցկացրել ՀՀ մարզպետների մասնակցությամբ:

Ողջունելով ներկաներին և անցնելով օրակարգային հարցերի քննարկմանը՝ Սուրեն Պապիկյանը մարզպետների ուշադրությունն է հրավիրել Հայաստանի տարբեր մարզերի վարչական տարածքներով անցնող կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման կամ նորոգման աշխատանքների վրա, որի նպատակն է կանխել հողերի գերխոնավացումն ու աղակալումը: Խնդրի կանոնակարգման ուղղությամբ նախարարը մարզպետներին հանձնարարել է վարչական աջակցություն ցուցաբերել դրենաժային համակարգերի մաքրման աշխատանքներ իրականացնող <Մելիորացիա> ՓԲԸ-ին և վերացնել տարբեր համայնքների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ինչ-ինչ պատճառներով ստեղծվող արհեստական խոչընդոտները:

Անդրադառնալով համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործման հիմնախնդիրներին՝ նախարար Պապիկյանը նշել է, որ համայնքներում վարելահողերի և ցանքատարածությունների քարտեզագրման և գույքագրման վերաբերյալ ճշգրիտ միասնական տեղեկատվական բազայի բացակայությունը բարդություններ է առաջացնում պոտենցիալ ներդրումային ծրագրերի առարկայական քննարկման գործում: Այս նպատակով նախարարը մարզպետներին հորդորել է ակտիվ բացատրական աշխատանքներ տանել համայնքների ղեկավարների հետ, որպեսզի վերջիններս իրենց հողային և տարբեր նշանակության ենթակառուցվածքային ռեսուրսներն առավել հրապարակային ու թափանցիկության ռեժիմով հասանելի դարձնեն բոլոր քաղաքացիների համար:

Սուրեն Պապիկյանը խոսել է նաև պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ-վաճառքով օտարման գործընթացում առկա խնդիրների մասին և ընդգծել, որ անհրաժեշտ է խոշորացույցի տակ վերցնել աճուրդի բոլոր փուլերը՝ բացառելու համար ապօրինության ցանկացած դրսևորում ու օրենքի սառից ցանկացած շեղում:

Խորհրդակցության ընթացքում <Կանգուն փորձագետների ակումբ> ՀԿ ներկայացուցիչների հետ քննարկվել է <Իմ քայլը հանուն մարզի> ներդրումային համաժողովների կազմակերպման, անցկացման, ինչպես նաև մարզերի զարգացմանն ուղղված բիզնես-ծրագրերի շարունակականության ապահովմանն ուղղված հարցեր:

Աղբյուրը՝ <http://mtad.am>, 12.03.2019